

201	Կորագիս	— Ա. Նիկողայոսի.	21	25	17	60	13	8
202	Ալմալու	— Ա. Ստեփանոսի.	26	80	10	15	7	10
203	Ռազուն - օրա	— Ա. Աստուածածնի	1	85	8	20	5	5
204	Ալակեօզ - Մազրա	— Ա. Խաչի.	6	..	31	78	12	5
205	Անիշիկ	— Ա. Թէոդորոսի.		331	6	9	4	80
206	Ենցիջա	— Ա. Աստուածածնի		3240	5	40	6	..
207	Այեար	— Ա. Աստուածածնի		1510	5	95	5	..
208	Էրթափին	— Ա. Աստուածածնի		72	5	..	2	30
209	Սէրս	— Ա. Աստուածածնի		522	52	48	5	10
210	Միրսիվան	— Ա. Մեսրովբի.		..	6	..	5	80
211	Ըսինջ և Գարաքարա	— Ա. Աստուած.	54	73	5	18	6	40
212	Մինդ	— Ա. Աստուածածնի		2..	7	93	6	13

Վեհափառ Կամողիկոսի բարեհաճութեամբ և հրամանով « Արարատի » մէջ հրատարակվելու են Հետզիետէ Հայաստանի եկեղեցուն վերաբերված զանազան վիճակագրական տեղեկութիւններ։ Խմբ։

ԱԼՆԵՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՆԱՀԱՆԳԻ ԿԱՐՈՒՑ.

(« ԱՐԱՐԱՏ » , յուլիս)։

Կենդանացած աճումն ևս երկրի մի տեսակ բերքն է, մանաւանդ ընտանի կենդանեացն, որ մասնաւորապէս մարդկանց խնամելովն աւելի կաձին։ Կարուց գաւառի արգաւանդ դաշտերն ու գրեթէ մշտադալար հովիտներն աւելի ևս նպաստաւոր փարախներ յօրինած են բնակչաց. բայց ինչպէս վերն ասացինք, մարդկանց գանդաղութիւնն այդ երկրութիւնն օգուտ քաղած չէ բնութեան այս ձրի պարզեւն։ Բայց դարձեալ կը գտնուին գաւառին մէջ Քիւրտեր, որք այծեր և ոչխարներ կը սնուցանեն և մեծ օգուտ կը վերցնեն իբրև երկրին բերքն։ Խոյնպէս և մատակ ձիեր կը պահեն այն Քիւրտերն։ որք լաւ ձիերէն քիչ տարբերութեամբ կաձին։ Իսկ Հայերէն գրեթէ ոչ ոք չկայ այս գործին հնտեւող, որ շատ օգտաւէտ կը լինի Շիրակայ դաշտում։ Հայերն ամեն տնւոր ունին իրենց համար կով, և ոչ խար խիստ սակաւաթիւ, այս էլ կանանց շնորհն է, որ կը պահեն։ իսկ այր մարդիկ ունին միայն մի լուծ եզն. որով կը սերմանեն իրենց սերմերն, եթէ կանանց այս տնտեսութիւնն չլինէր, Շիրակայ գեղացւոց տներում որ և է ուտելիք պիտի շնորհուածու։ բայց գթուտ մայրերն իրենց մատաղ որդուոցն գոնէ կաթ մատակարարելու համար, գրեթէ իրենք կը պահեն կովեր, մաքիներ և մատակներ (էգ գոմէշ), որոց հորթերն ևս լծկան կը դառնան հետզիետէ երկիրն արօրադրելու։ Կարի սակաւաթիւ են այն Հայերն, որ իրենց պէտք եղածէն աւելի նորահաս հորթեր ունենան, և վաճառն։ Բայց կան բաւական թուով Հայ տնւորներ, որ իրենց շատ հարկաւոր եղած մի լուծք եզն անգամ շունին, և այս կարգի մարդիկն երկրին մէջ աղքատ կը կոչուին։

Դարսեցու արուեստը կամ զործը⁽¹⁾։ Կարուց քաղաքի Հայ բնակչաց կեան-

(1) Հայոց նկատմամբ միայն կը նշանակեմք։

քըն և ապրուստն և իրենց վիճակն ճշղիւ իմանալու համար հետեւցանք իմանալ նոցա գործած գործերն ։ և եթէ կարողացանք առանց աւելի կամ պակաս տեղեկանալու իմանալ, հետեւ արհեստաւորներն միայն կան։ 150 հայ գինի և օդի վաճառող՝¹⁾։ 100 հայ կտաեղէն վաճառող՝²⁾։ (չիթճի)։ 30 մանրավաճառ։ 15 հացագործ։ 12 հոշկակար։ 10—15 գերձակ։ 10 երկաթագործ։ 5 ջուլհակ։ 8 ոսկերիչ։ 3 պղնձագործ։ 2 աճառագործ։ և ուրիշ մանր տեսակ դործեր անողներ։ զոր օրինակ կիր այրող, բրուտ, մաղագործ, մորթի գնող և վաճառող և այլն։ Այս գործողներէն զատ 20 տնւոր մարդիկ ևս կան, որ բնաւ որ և է գործով շեն զբաղիլ, այլ միշտ զատարկութեամբ ման կը գան։ եթէ համեմատելու լինինք, կարուց գաւառումն աւելի կանայք կաշխատեն, քան թէ մարդիկն։ և այս մանաւանդ հայոց նկատմամբ։

Հայոց աղբատուրեան պատճառն։ Ընդհանրապէս առնելով Շիրակայ մէջ բը-նակող հայերն աղքատ են, և սորա պատճառն ուրիշ ոչինչ չե, բայց մի-այն երկրին առատ պտղաբերութիւնն ու նորա հետևանքն եղող բնակչաց ծուլութիւնն է անշուշտ։ Այս կարծիքն համառօտիւ բացատրենք։ Աղեք-սանդրոպօի սահմանում 10 բուբլի արժող ցորեանն 3 բուբլի կարծէր կարուց գաւառումն՝³⁾։ և այս անշուշտ երկրին առատութեան երեսէն էր. այդ պատճառաւ քաղաքացի արհեստաւորներն որչափ քիչ աշխատէին, դարձեալ իրենց օրական պիտոյքը ձեռք կը բերէին. հետևաբար ոչ մի ար-հեստաւոր չունի յառաջադիմութիւն տեղական վճակին մէջ, և այս ի հարկէ աշխատութեան պէտքը չզգալին և յառաջադիմութեան որ և է գա-ղափար մի չունենալին յառաջ եկած է, որով և առհասարակ արհեստա-ւորներն մի ծանր դանդաղութեան մէջ կը գտնուին։ Քաղաքացիէն օրինակ առած է և գիւղականն որ գրեթէ ամենեկին չաշխատիր իւր արդեանց աւելիալուն, հետևաբար գրեթէ սոված վիճակի մէջ կը գտնուին պատերազ-մի պատճառած թանկութիւնն սկսուելին ի վեր։ Երկրագործներն իրենց յուսահատութեան ուրիշ պատճառ մի ևս ունին, այն է վաշխառուաց ան-խիղք վարմունքն. միմիայն 10 բուբլի արժող սերմ տալով երկրագործին, կը վերցնեն նորա արդեանց կէսն (որ առ նուազն 60—70 բուբլի կարծէ)։ և այս առանց բնաւ մասնակցելու նորա որ և է մի ծախուցն. մինչդեռ երկ-րագործն կը վարէ և կը հերկէ, անասուններն կը դարմանէ, չնձոց ծախքն ու

(1) Ի հարկէ Ռուսաց տիրապետութենէն վերջն այսափ ածել է այս առեւտրակա-նաց թիւն. ըստ որում սոցա մեծագոյն մասն Աղէք քսանդրապօլիքի, Ախալցխասցի, Ա-խալքալակցի, եւ Երեւանայ նահանգէն այլեւայլ գաւառուներու բնակիչ Հայեր են։

(2) Այցա մեծ ման հին կարսեցիք են. եւ արդիւնաւոր վաստակ ունեցողներն սա-կաւաթիւ են, ըստ սրբում այս գործով գրալող տաճիկներ եւա շատ կան։

(3) Պատերազմէն յառաջ Աղեք քսանդրապօլում տասն բուբլի արժող մի սոմար ցո-րեանն կարուց մէջ 3—4 բուբլի կարծէր, այսպէս կը հաստատէին բոլոր երկրացիք Եւ աւելի եւս կարժաննայ եղել այն տարիներում. երբ Ռուսաց սահմանն անցընելն կարգելուի Ռուսաց մաքսաներու կողմէն։

կալի նեղութիւնն անձամբ կը վերցնէ չարաչար տառապելով։ Երկրագործին միայն չերկել, վարել և ցանկն, երեք անգամ աւելի կարժէ քան թէ տը- րուած սերմի զինն. սորա վերայ եթէ ճշլութեամբ հաշուենք և հնձոց ու կալի աշխատանքն, պէտք է արդեանց մի տասնորդն ստանայ վաշխառուն, իսկ ինն տասնորդն մնայ երկրագործին։ Քայլց վաշխառուներն այս հաշիւն խսպառ զանց անելով՝ այն աշխատող մշակի քրտանց կէսն կը խլեն ընդհան- րապէս նորա տկարութենէն կամ տղիտութենէն օգուտ քաղելով։ ոմանք ևս նախապէս իրենց տուած սերմն արդիւնքէն ամբողջապէս հանելէ ետքն մը- նացածը կը կիսեն. այսպէս երկրագործն ամեն ժամանակ արդիւնքէ զրկուե- լով և վայելութեան բնաւ չհանդիպելով, քաջալերուած չէ ամենելին իւր արուեստին մէջ, և կաշխատի պյուշափ միայն, որ մի ցամաք հաց ունենայ։

Քաղաքացի առևտրականներն ևս ուրիշ պատճառ մի ունին իրենց ասպար- դիւն մնալուն. սոքա միշտ իրարու նայելով, միենոյն տեսակ իրերու առև- տուրին կը հետեւին. և այս առևտուրի արդիւնքն եթէ **10** առևտրականաց բաւական պիտի լինի, կը գտնուին 100 և աւելի անձինք նոյն պարապման հետեւող. հետեւարար արդիւնքն էլ շատերու վերայ բաժնուելով՝ ամենքն ևս կը զրկուին չափաւոր շահէն, և ոմանք ևս վեասուց կենթարկուին։ Եւ այս վեասուց երեսէն միշտ մ.կզմէկ արհամարհչելով, ոչ մի անգամ չեն խորհիր իրենց գործն արդիւնաւոր անելու ելք մի գտնել, և ծագած հակա- ռակութեանց պատճառաւ երբեմն իրարու կը վնասեն։ Եւ մինչև այսօր ըն- կերութեան և արհեստաւորաց միախորհուրդ գործառնութեանց արդիւնա- ւորութեան տուած օգուտներուն վերայ բնաւ գաղափար չունին։ Ի հարկէ պիտի գայ օր մի յորում արթննան Հայ առևտրականներն, և սկսեն իրենց առաջիկայ գործառնութեանց հաշիւը ճշութեամբ տեսնել, որով և օգուտ քաղեն ու վայելութեամբ ապրին և կարողանան իրենց որդիքը սնուցանել։

Բ. ՀԱՅԻԹԻՒՆՔ ԿԱՐՈՒԽ.

կարս խաղաֆ. **Վանանդայ**¹⁾ գաւառին մայրաքաղաքն է. յորում ընակող ազգերն ու ժողովուրդն զրեթէ հին գարերում ինքնազլուխ կառավարու- թիւն ունեցած են. և այս տեղւոյն բնական ամրութեան երեսէն անշուշտ։ կարս Ամուրն երկու զուգահեռական աղեղնաձեւ լերանց զրեթէ հաւասար բարձրութիւն մի է, որոց մէջէն կանցնի Ախուրեան աղեղնաձեւ քարտշա-

(1) Այսպէս կը կոչուի այս գաւառոն ըստ Խորենացւոյն. ո Եւ աստ կոչեցեալ վկույրենի եկամուտ տղթն, Եւ արծտէկ զնոտա հանդերձ արտմբք իմաստնովք Եւ վերա- կցուօք յիւրմէ. Եւ իմքն արձակեալ զարեւմաւեայ բազմութիւնն, իջանել ի տեղիս խոսաւէտ մերձ ի սահմանն Շարայի, զոր հինքն Անփայտ Եւ վերփն Բասեան կոչէին. իսկ յետոյ վասն հատուածին Վանդուր Բուղկարայ Վնդայ բնակելոյ ի տեղիս. յա- նուն նորա անուանեցաւ Վանանդ, Եւ անուանք շինիցն յանուն եղբարց Եւ զարմից նորա անուանեալ կոյին մինչեւ ցայժմ. և Խորենացւոյ յիշած այս շինից անուններէն մնացած լինին թերեւս հետեւեալներն. Պողպարայ. Քէքէճ. Ճաւլախ. Փարաստան- իկտիր. Արտստ. Մրիւէլ. Լաջակերտ. Զաթաղ. Խակ մհացեալ գիւղերն սովորական տաճկերէն բառերով կը կոչուին։

ուն կտրելով. որուն համեմատութեամբ մարդկան ճարտարութեամբ կը տրուած անցքերն առաւելութիւն մի չեն ունենար. Այս երկու սարերուն վերայ մինչեւ քսանէն աւելի մարտկոցներ կան միջնաբերդի հիւսիսային արևելեան կողմէն սկսած մինչեւ արևմտեան կողմն հիւսիսէն գառնալով. Միջնաբերդն հարաւային սարի արևմտեան ծայրի գագաթն է յօրինուած ամենաէն անառիկ դրութեամբ. որուն անմիջապէս արևելեան կողմն է խարատաղ ասուած մարտկոցն՝⁽¹⁾ որ միւս մարտկոցներուն համեմատութեամբ զիւրամբձնալի է.

Դարս խղափի կոչումն. Խնձիճեանն այս կոչումն ստուգաբանած է Վրաց լեզուի նշանական բառի մը սեռականէն առնելով. և նշանակութիւն կը տայ դրան քաղաք. բայց այս պյնչափ բանաւոր չերևիր. որովհետեւ Կարս քաղաքը Վրաց պետութեանն անցած է միայն Հայոց Բաղրատունեաց թագաւորութեան անկումն վերջն, և գիտեմք որ այս դարէն շատ յառաջ ևս Կարս կը կոչուէր այս քաղաքն. Ըստ մեզ Կարս բառն հայերէն պարզ բառ մի է ոյժ. կարողութիւն նշանակող. և այս անունը տուած են Հայք ի հարկէ տեղւոյն ամրութեանն յարմարցնելով. որոյ անեղական անուն մի լինելն ևս մի նշան է այս բառին բուն հայերէն բառ մի լինելուն. Որովհետեւ հայերէն լեզուի մէջ միշտ անեղական կը լինին այն անուններն, որ բնական զցյգ մի են և միենոյն անուամբ կը կոչուին. ինչպէս աչք, ականջք, ձեռք, ոտք, ելն. Հայոց լեզուի այս կանոնին համապատասխան է բոլորովին Կարս կոչուած զիւքն, որ զցյգ մի սարեր են, և Կարք կոչուելու փոխանակ Կարս կը կոչուին. որովհետեւ տեղւոյ անուն է, ինչպէս որ ուրիշ յատուկ անուններ որ զցյգ են և յոգնական վերջաւորութեամբ կը գործածուին. ինչպէս Մասիս, Ագուլիս, Արտագերս, Խորենացւոյն ասածին նայելով այս գաւառն Վանանդ կոչուեցաւ Վաղարշակայ աւուր գաղթականաց գլխաւորին Վնդայ անունովն. իսկ Վիրգիլիոսի գրածին Նայելով, այս երկիրն Կարս⁽²⁾) կը կոչուէր Օգոստոս կայսեր տիրապետութեան ժամանակներն ևս. Աւելորդ չլինիր կարգալ այս տեղ Վերգիլիոսի այս կտորն (Հիւրմիւզեանի թարգմանութենէն).

- * Յերկայնաձիգ գնան ի կարգ ազգ նկունք,
- * Այլաբարբառք, ի զէն ու ի ձես անհանգյնք,
- * Աստ Աստուածոյն ընդ նոմադիցն ի պատկեր
- * Զազգս անգօտեացն ափրիկեցւոց ածեալ էր,
- * Եւ անդ ընդ Կարս և ընդ Լելէզս ի նկար
- * Զքաջաղեղանցն Գեղոնից զճամբար.
- * Մեղմիկ ալիքն անդ Խփրատայ հոսէին.
- * Անդ հեռագոյն աղդ ի բնակիչս Մորին.

(1) Թերեւս Հայ պատմաց յիշած Շատրիկ բերդն լինի.

(2) Վերգիլիոսի թարգմանողն Ժանօֆութեան մէջ այս երկիրն սահմաններն կը նշանաւէ այնպես երկիրներն, որոյ միջում ոչ դարս երկիր կայ. Եւ ոչ դարս ցեղ.

«Եւ երկեղիւրն Հուենոս և Տայք աննկունք»:

«Եւ Երասխայն ի Կամբջաց ըմբռոստ հունք»:

Խնէական գիրք Ը. տող 1081—90:

Այստեղ Օդոստոսի յաղթած ազգերն կը թուէ Վիրզիլիսոս, որ Ափրիվցւոց զանազան ազգերն յիշելէ ետքն անմիջապէս կը դնէ Կարս ազգն կամ երկիրն, որ ուղղակի հիւսիսային Հայաստանի այս մասն այսինքն Կարուց սահմանն է. (զոր ուրիշ երկիր կարճել է Հերմիւզեան). ըստ որում արգէն Միհրդատայ պատերազմներում Հոռվմայեցիք տիրեցին Ա. սիոյ հարաւային գաւառներուն մինչև Հայաստանի կէս մասն և նոցատիրապետութենէն ազատ էին Պօնտոսի հիւսիսային մասի բնակիչ Լազերն (Լելէգս), Հայաստանի հիւսիսային արևելեան մասումն Գեղամեանք (Գեղրնք), որ Հայկազանց մի ցեղն էր Գեղամայ երկրում, և Արշակունի թագաւորութեան Միշագետք քաշուած ժամանակներն ինքնազլուխ կը կառավարուէին. նոյնպէս Եփրատայ ականց սահմաններն այսինքն Մասիս լեռան հարաւային կողմերումն նոր թագաւորներ նշանակուեցան այս միջոցին. նոյնպէս Եփրատէն հեռի ազգ ի բնակիչս Մորին. թերևս հասկանալի է Մասիսի հիւսիսային և արևելեան ստորոտներումն յիշուած Մորերն. Եսկ երկեղջիւրն Հուենոսն կը լինի Գուգարաց սահմանէն անցնող իրամոսն կամ յորանն որ կը իսառնուի Կուր գետին, գրեթէ նոյն սահմաններում անն կուն Տայքն արգէն Հայաստանի արևմտեան հիւսիսի վերջին գաւառն է. և Երասիս որ այս նշանակուած երկիրներուն մէջ տեղէն կանցնի Արարատայ և Սիւնեաց նահանգներում⁽¹⁾:

Հայկական յիշատակարանք. Մինչև Բագրատունեաց թագաւորութեան օրերն Հայոց պատմութեան մէջ չյիշուիր որևէ հայկական գործ և շինութիւն. (թէ պէտ Վաղարշակայ օրերէն սկսած Հայոց իշխանութեան ներքեւ էր. ինչպէս վերն յիշեցինք Խորենացւոյն պատմութենէն մէջ բերելով): Աշոտ երկաթի մահուանէն ետքն յաջորդող Աբաս⁽²⁾) թագաւորն որ Սմբատայ որդին էր և Նշոտ Երկաթի եղբայրն. շինեց Կարուց կաթողիկէն իւր թագաւորութեան խաղաղ օրերում⁽³⁾) այս կաթողիկէն կանգուն կայ մինչև ցայսօր

(1) Հիւրմիւզեանն իւր թարգմանութեան ծանօթութեանց մէջ, Կարս կը նշանակէ Լիկիոյ (Զիւռունիոյ) եւ Յանիոյ մէջտեղերում. Լեւկոներն կանուանէ թափառական ազգ մի, կամ կարսեցւոց հետ նոյն կը դնէ. Գևողեներն կը համարի ազգ մի, որ կը քնառին կամ Ոլիւթիոյ կամ Թրակիոյ մէջ. Մորիքք կը համարի ազգ մի Պելլետեան Գաղղիայում. Եւ չուենոս միհւնոյն Ելբրազի մէջ Ֆանօթ եղած Հուենոս գետոն, նոյնպէս եւ Տայոց տեղն օտարոտի կը դնէ բոլորովին. Եւ միայն Երասիսն ու Եփրատը կը վերաբերէ Հայաստանին:

(2) Աբաս թագաւորեց 378—9 թուին Հայոց, այսինքն 929—930 թուականին.

(3) ո Եերապան առաքէ (Բէր Եշանն Ավիտագաց) առ թագաւորն Հայոց մի օրհնել նմա զեկութեցին լսու ուղղագւաւան հաւատոյ սրբոյն Գրիգորի. Վասն զի ասէր, գայլ կատարել քաղկեդոնական սահմանաւան. զի էր շինեալ թագաւորին գկաթողիկէն սուրբ է քաղաքին կարուց վիմարդեան արձանօք. որձաքար սղողվատատաշ վիմօք բոլորապէս

բերդաբաղաքին մէջ և կը կոչուի Երկուսասմ առամելոց եկեղեցի. որոյ նկարագրին համար Տարօնեցւոյն գրածն արգէն բաւական է: Այս եկեղեցին փակուած և կնքած էր Ռուսաց կառավարութեան կողմէն մեր այցելութեան միջոցին, ռւստի չկարողացանք տեսնել ներքին կողմն թէ արդեօք արձանագրութիւն ունէր, Աւրիշ տեսնողներն, որք միշտ հետաքրքրութեամբ ներս են մտել, ամենեին զիր չեն գտեր. և կասէին թէ ներքին կողմն բոլորովին իրրե թէ նոր շինուած այնպէս մնացած է, նոյնպէս և սեղանի վէմն ու խարիսխն կանգուն կը կենան: Եկեղեցւոյն զրան վերայի արձանագրութեան տեղն այժմ իսկ յայտնի է, զոր ընջեր են Տաճիկներն: Սորա արտաքին կողմէն արեւելեան հարաւային անկիւնէն տասն քայլաչափ հեռոի կայ մի փոքր մատուռ ճիշտ եկեղեցւոյն ձևով շինուած, զոր իրբեւ մարագ կամ մառան կը գործածէ այժմ տաճիկ ընտանիք մի. այս մատրան ներքնայարկի կամարն քանդած է զրեթէ մէջ տեղէն, և աղբիւսով լեցուցած: Գուցէ այս տեղ լինի Արասայ գերեզմանն (զոր շեն յիշեր մեր պատմիչներն): ըստ որում բոլորովին նման է ուրիշ տապանատունի մի: որոյ մասին զրելու եմք վանի կամ շիրիմք Սմբատայ կոչուած տեղւոյ ստորագրութեան մէջ ⁽¹⁾):

Ուրիշ եկեղեցի: ⁽²⁾ Առաքելոց եկեղեցին գէպ յարեւելք կայ եկեղեցի մի օրոցաձև, զոր տաճիկներն ի մզկիթ փոխարկած են եղել: այժմ Ռուսաց իշխանութիւնն հրազէններ լեցուցած է. և զրանն առջև պահակներ կը հսկեն: Այս եկեղեցւոյ արտաքին կողմն փողոցներն լեցուելով բարձրացած կերեւի կամ գուցէ հին ժամանակն գետնի շատ խորը ձգուած է յատակն: ըստ որում եկեղեցւոյն խորութեան զրեթէ կէս տեղէն տախտակամած յատակ կազմած են տաճիկներն և ներքեւ պարապ կը մնայ: Արտաքին կողմէն ևս աւանդատան փոքրիկ պատուհանն կերեւի զրեթէ գետնին հաւասար, մինչդեռ ներքին կողմէն աւանդատան զրան կամարն հազիւ կերեւի: Եկեղեցւոյն արեւելեան որմին մէջ հաստատուած կան խաչքարեր, որոց հետ արձանագիր մի ևս զլիսիվայր զրուած: ⁽³⁾ որոյ միայն առաջին տողն կը կարդացուի ⁽⁴⁾ Տէր Աստուած ողորմեա ուրիշ որ և է յիշատակարան չերևացաւ:

Ուրիշ եկեղեցի: ⁽⁵⁾ Միւնոյն փողոցում, Պէշիկ ճամփի արեւելեան կողմն կայ և ուրիշ եկեղեցի մի հայոց փոքր գմբէժով կանգնած: որոյ զուռն ևս

գմբէթաւորեալ պայծառ գարդուք Երկնանման խորան և . Ստեփաննոս Տարօնեցին: Կեր Գ. Կ. Է:

(1) 1878 գեկտ: 24 ին այս եկեղեցին բացեր եւ սրբագործեր են Ռուսներն իբրեւ եկեղեցի Ռուսաց: ինն ամսով գետերը անցնելէ ետքն բներայ խորհուրդն եւս կը կատարուի այս Եկեղեցւոյն վերայ.

(2) Պէտի ճամփի սպահնեն օրսցածեւ մզկիթ կանուանեն տաճիկներն:

(3) Գուցէ այս արեւելեան որմի նորոգութեան ժամանակ գետը կարդալ չգիտցող ու չերմեւանդ: Հայ որմնադրի մը նշանն լինի: որ խաչքարերն ուղիղ տեղաւորած է: իւ յիշատակարան հակառակ, իհարկէ յանդէտա:

(4) Թափ ճամփի կանուանեն տաճիկներն, գմբէթին ձեւէն առնլով.

կնքուած էր Թուսաց տիրելին վերջն. տեսնողներէն ոմանք կասեն թէ հայերէն գրով յիշատակարան կայ սորա ներքին կողմն. Զոր մեք չտեսանք փակուած լինելուն պատճառաւ:

Սուրբ Սարգիս. Միջնաբերդին մէջ եկեղեցի մի շինել են հին ժամանակներում հայ թագաւորներն և նուիրել Սուրբ Սարգսի անուան, որ բարեկոս և զօրավիր լինի իրենց Յունաց գէմ. այս եկեղեցին բոլորովին անհետ են արել տաճիկներն հինգ կամ վեց տարի յառաջ. Որուն բոլոր քաղաքացիք կը վկայեն.

Ուրիշ եկեղեցի. Միջնաբերդին հարաւային զառիվայրին կէս տեղումն տաճկաց զատարանի բակին մէջ կերևի և փոքր քառակուսի քարուկիր շէնք մի գմբեթաւոր, որուն համար տեղացիք կասեն թէ հայոց եկեղեցի է ի մզկիթ փոխարկուած:

Բերդապարհիս յաղախին. Կարուց քաղաքի բուն տեղն արդէն պարսպափակն է. իսկ դուրսի մասն այս դարուն տաճիկներէն յաւելցուած. Բերդապարսպին արևելեան դրան որմէր կերևի թէ աւելի հնագոյն են քան թէ շրջապատ պարիսպն և իւր աշտարակներն. Այս դրան վերայ դրսի կողմէն կերևին առիւծի արձաններ, որ գրեթէ մաշուել են, և շատ գծերն անցայտ են.

Քերդապարսպի հարաւային դրսի կողմն ևս կը ցուցնէ աւելի հնութիւն, քան թէ պարիսպն. այստեղ հայկական քանդակներու հետ միասին կերևի և արձանագրի մի փոքր մասն պահող քար մի, որ դրուած է անշուշտ քանդակաց թերին լեցնելու համար, որոյ ընթերցմունքէն մի ամբողջ խօսք չհասկացուիր:

Ուրիշ եկեղեցի⁽¹⁾). Քաղաքէն դուրսն Ախուրեանի հարաւային ափումն կայ եկեղեցի մի աւերակ. որոյ ութանկիւնի որմոց շաղախներն ամբողջ կանգուն կը մնան. բայց տաշած քարերն տարած են. այս եկեղեցւոյն վերայ որոշ տեղեկութիւն ունեցող մէկու մը շհանդիպեցանք ամենեին. բայց արևմտեան կողմն գտնուած գերեզմանէն կերևի թէ վանք եղած լինի, որու առանձին պարիսպն ևս կը նշանաբռնի իւր մնացորդներէն:

Քաղաքի հիւսիսային կողմն կը գտնուի և Միանձումն կոչուած այրն, զոր ծին բունարի կանուաննեն տաճիկներն, նոյնպէս և Խարապայ Քիլիսէ կոչուած աւերակն, զորս մենք չկրցանք տեսնել:

ՎԱՆԱՆԴ ԳԱՒԱԾԻ ԳԻՒՂԵՐՆ.

Վանանդայ սահմանն. Նախնեաց գրուածքներուն մէջ նշանակուած շնն Վանանդայ սահմաններն. Այս ճանապարհորդութեան միջոցին մէր անցած տեղերէն որչափ որ կրցանք նկատել և ստուգել, ըստ այնմ կը զնեմք այս տեղ. Վանանդայ սահմանն է արևելքէն Երասխաձոր, Շիրակ, Ալածայ լեառն և Ախուրեան գետն—Արգինայէն գէպ ի հիւսիս. Հիւսիսէն Տայոց գաւառներն—

(1) Բերդապարսպէն գուցսն է:

ճակբ, Արտաշան և Կեօլէ. Արևմուտքէն Օլթի և Նարիման ու Սունլըի անտառն. իսկ հարաւէն Ստորին Բասեն, Երասխ և Երասխաձոր. Վանանդ գաւառն իւր մէջ գաւառակներու կը բաժնութ. որ են, Կարս (Թահիթի Կարս) Բասեն, Զարիշատ. Զըլտըր.

Կարսի գիշերն. Այս գաւառակին մէջ հայաբնակ չորս գիւղեր միայն կան, որք են.

Դանի կամ Ղանի գիւղ.¹⁾ Կարս Քաղաքէն դէպ ի հարաւ երկու և կես ժամու շափ հեռաւորութեամբ փոքր գիւղ մի է, յորում կը բնակին 30 տուն Հայեր. (Նոյնչափ կամ աւելի ևս տաճիկներ). ունին եկեղեցի մի յանուն Սուրբ Յակովը²⁾ անշուք բոլորովին: Ուսումնարան ունեցած չեն մինչև ցայսօր. միայն թէ Գեր, առաջնորդին հրամանաւն կը պատրաստուէին մի տեղ նշանակել, որ վարժապետն հասնելուն պէս սկսին մանուկներն հայերէն հասարակ ընթերցմունք սովորել.

Այս գիւղի ժողովուրդն ևս Շիրակայ գիւղացւոց բնութենակից են. կը վարեն ու կը սերմանեն, կը պառկին և կոպասեն, մինչեւ հունձքն հասնի. Հետեւաբար կապրին անվայելու ու խեղճ դրութեան մէջ. այնպէս որ շատերուն մօտ հինգ կոպէկ չգտնուիր շատ անգամ, որ քերական մի գնեն իրենց որդւոցն. Երկրին առատ պտղաբերութեան շնորհիւ միայն կապրին և ոչ երբէք իրենց խելքով. Եթէ երբէք զարթնուն այս Հայերն և աշխատին քանի որ ժամանակ ունին, և մասնաւորապէս սէր ունենան իրենց որդւոց վերայ, այսինքն ցանկանան, որ նոքա իրենց այսօրուան անցուցած դառն կենաց մրուրին չհանդիպին, յուսալի կը լինի որ Հայաստանի ամեն գաւառներէն աւելի այս գաւառի Հայերն պիտի լինին բարեկեցիկ: Այս ապազյ բարիքներէն իրենց որդիքը չզրկելու համար մեր խորհածին չափ խրատեցինք այս ժողովուրդն որ վաղուան լուսանալուն չսպասեն: այլ այսօրուանք զարթնին և որչափ կարելին է սիրեն աշխատութիւն: և հեռացնեն իրենց գիւղի սահմաններէն դատարկութիւնը. կարելի եղածին շափ հետեին մշակել իրենց կալուածներն և ընդարձակել, և ոչ երբէք ձեռքէ հանել, ինչպէս տաձկաց օրերում:

Հնուրիւնն. Գիւղին հիւսիսային կողմն զառի վերին երեսն կերեկին հին գերեզմանաբարեր հողին մէջ զրեթէ ծածկուած. երբեմն հեղեղներէն, երբեմն գիւղի երեխայներու փորելէն բացուած են գերեզմաններ, որոց մէջէն ելած ուկրներն այժմու մարդկանց սովորական հասակէն կէս կան-

1 Գիւղացիներէն ումանք կոտուգտրանեն այս անունն առատ, Երկրին բարեբերութենէն առնելով: Ոմանք եւս երկրորդ անունը կը թարգմանեն արիւնուաշտ, որպէս թէ այս գիւղի բնակիչներն արիւն կը մարդիկ լինին: Եւ իրօք գեղացւոց պատմութեան նայելով. հայերն այս վերջին պատերազմի միջոցին բաւական արիացած են տաճկաց անկանոն զօրաց դէմ, որ քանի մի անգամ գիւղը կողպատելու փորձ փորձած են:

2 Յայտնի չէ թէ որ սուրբ Յակովը անունով է. ըստ որում ոչ Եկեղեցին աքանագրութիւն ունի, եւ ոչ քահանայն հմուտ է, պէտք եղածին չափ:

գուն մինչև մի կանգուն երկայն են։ Միևնույն տեղեւն հանուած են երբեմն պտուկներ, կանթեղներ և տեսակ տեսակ կրեղաններ։ Գերեզմանաքարերուն մէջ ոչ օրոցաձեւ և ոչ խաչ արձաններ կերեին։ այլ առհասարակ տափարակ քարեր են։ որոց մանրներն կանգնեցուցած են, իսկ խոշորներն շիրիմին վերայ երկնցուցած։ Գերեզմանաքարերու այս զրութենէն կերեի, թէ այս զերեզմաններն Հայաստանի քրիստոնէութենէն յառաջ թաղուած ոսկերոտիք ու մոխիններ կամփոփեն։ Սյոյն գերեզմանատեղոյն արեւմնեան հարաւային զրեթէ անկիւնումն, կերեի մի փռքը մատուոի հիմունք հողին հետ հաւասար, որոյ քարերէն մի քանի մեծերն ես կը մնան պյուտեղ։ որոց միոյն վերայ երեցած քանդակի մնացորդներն գիր կարծուած են շատերէն։ (և տեղացիք կաւանդեն թէ գիր է) այս քանդակներուն մի կողմէն բաւական թանձրութեամբ կիսալուսին մի ձևացուցած է։

Ազատ աղբիւր։ Գիւղէն դեպ ի հիւսիսային արևմտեան կողմն երկրորդ հովտին զառիվերին վերայ ցամաք աղբիւր մի է, ուր ուխտիք կը յաճախեն Կարս քաղաքի և շրջակայ գիւղորդից Հայերն։ այս աղբիւրն ամեն տարի օգոստոսի 1ին կսկսի բջինել և սեպտեմբերի վերջին օրերումն ցամաքիւ։ Աղբիւրին վերայ շինութեան հիմունք կերեին, և տեղացիք կը հաստատեն թէ Թաղէոս առաքելոյ վանքն է։)

Պետիլի Անմէտ։ Կարսէն դեպ արևմուտք երեք և կես ժամու չափ հեռաւորութեամբ հայաբնակ գիւղ մի է ։ ուր կը բնակին հարիւրի չափ հայ տնւորք և քանի մի տուն տաճիկներ, այս գիւղը Տեօշ Գայս կոչուած սարի ստորոտումն է, և բաւական տեղ ունի Ռւնին մի եկեղեցի յանուն սուրբ Աստուածածնի Նորոգ շինուած, քարուկիր որմերով և տախտակամած յարկով։ Ուսումնարան չունին։ մի վարժապետ քսանի չափ աշակերտներ կը վարժէ հայերէն ընթերցանութեան։ Սոքա ևս կը պատրաստուէին ուսումնարան մի շինել եկեղեցւոյ բակումն առաջնորդին տուած հրահանգին համաձայն։ Գեղացւոց վիճակն ու դրութիւնն միւնոյն է միւս գեղացւոց դըրութեան։ սոքա պատերազմի միջոցին իրենց ունեցած երկրագործական ամեն արդիւնքներն մեծագնի ծախած և բաւական հարստութիւն ձեռք բերած էին, ինչպէս իրենց բերանը կը վկայէր երբ առաջին անգամ գնացինք. բայց վերադարձին երբ երկու ժամու չափ միջոց այս տեղ իջևանեցանք, նոր ի նորոյ

I. Ազատ աղբիւրի հնութեան վերայ տեղեկութիւններ փնտռելու ժամանակ, լսեցիլք թէ սորա գրչագիր պատմութիւնն կը գանուի յԱղէ քամնդրապօլ Բաբյուսան Մահտեսի Մկրտիչ աղոյի մօտ, մեր վերադարձին վինտուեցինք այս պատմութիւնը եւ չկրցանք տեսնել։ միայն թէ Մահտեսի Մկրտիչ աղոյն իրեն կարդացածը կը պատմէր, թէ այն աղբիւրը Թաղէոս առաքելոյ մկրտութիւն տրած տեղն է, եւ շատ բազմութիւն մկրտուած են առաքելոյն ձեռքով.... այս պատմութիւնն պատմեց մեզ իւր կարդացածէն առնելով, որոյ բռվանդուկն այժմ չիմ յիշեր, Յուսալի է թէ այն գիրքն երեւի օր մի Եւ պատմութիւնն անթերի ունենամք։

լսեցինք, թէ այն իրենց ձեռք բերած փողերն ամբողջապէս կորուսած են .ըստ որում պատերազմէն վերջն անմիջապէս տասնի չափ գինետուներ բացուած են, և հետզհետէ շոայլութիւնն ու շուայտութիւնն աւելացել է:

Կարս քաղաքէն հինգ ժամու չափ հեռաւորութեամբ հայարնակ գիւղ մի է, ուր կը ընակին երեսունի չափ հայ տնւորք: Ունին եկեղեցի մի յանուն սուրբ Լուսաւորչի, որոյ հարաւային կողման դրան սեամերն զրեցով ծածկուած են, բայց մաշուած և անընմեռնին են բոլորովին¹⁾: Գիւղին անմիջապէս արևելեան կողմն զառի վերին երեսն կայ գերեզմանատուն, ուր կը գտնուին խաչարձաններ, օրոցածև քարիր և ձիաքարեր²⁾ որ ամբողջ քարն մի ձի են ձևացուցել թամրովն ու սանձովն, և գաւակի ծածկոյթին ծոպերովն. Նոյնակս երկու կողմերն վահան և կապարձ նետերով լի, և նիզակ: Միայն ձիոյն ոտքերն ամբողջացուցած չեն:

Պէրնէի Հայերն միւս գեղացւոց համեմատութեամբ աւելի աշխատաւորք են. և կենցաղավարութիւննին բաւականին վայելուչ: Մեր խօսած խրատներն ամեն տեղ գրեթէ միւնոյն միտքն ունեին, որով կը յորդորէինք Հայերուն աշխատասէր լինել, իրենց հացն առատացնելու ջանքէն բնաւ շղաղարել, պէտք եղածին չափ ինամք ունենալ իրենց որդւոց վերայ, որք հետզհետէ իրենց հայրերուն տեղն անցնելով կարողանան յառաջադէմ լինել գոնէ ժամանակի պահանջանածին չափ. Նոյնակս և ուսում ունենալ և արուեստից կատարելազործութիւնն կարգալ, սովորել և օգուտ քաղել. որպէս զի արուեստով աւելի զիւրութեամբ կարողանան վերցնել իրենց բեռներն, քան թէ շալակով և անտանելի բեռնակրութեամբ: Այս միւնոյն խօսքերն կրկնած եմք այն ամեն Հայերուն, որոնք երկրագործութեամբ կը պարապին. վասն որոյ ուրիշ տեղեր այլ ևս հարկ չլինիր կրկնելու դերնէի մօս աւերհաջ վաևի: Պէրնէին քսան րոպէի հեռաւորութեամբ տաճկարնակ գիւղ մի կայ Սըրգոր³⁾ անուն. յորում վանքի մի աւերակներն կերկեին. և գեղացիք այսչափ ինչ աւանդութիւն ունին: Թէ այս տեղ մեծ ուխտատեղի է եղեր Հայոց. և տաճիկներն երկիւղածութեամբ կնային այս սրբավայրին:

1 Գեղացիք կը պատմեն թէ յառաջ հին վանք մի կեցած է նոյն գիւղում. եւ այն սեամերն այն վանուց քարերու մնացորդներէն են. գեղացւոց այս աւանդութիւնն ստոյգ կերեւի բոլորմին, ըստ որում գրուածքէն կերեւի թէ վերին բարաւորի քարեր են եւ ոչ սեամեր: Այս հին վանքին անունն իմացող կամ գոնէ իրենց հաւերէն ըսող պէրնէցիներն արդէն մեռած անցած են. հետեւաբար չկարողացանք իմանալ մի հոսութեան վերաբերեալ տեղեկութիւնն:

2 Հագտորացւոց տիրապետութեանէն յետոյ Հայոսստանի շատ գաւառուներում ոկսան տապանագարերն օրոցածեւ դնել, եւ հետզհետէ ոչ միայն խաչարձանի ոովորութիւնն պակուծ, այլեւ մի կողմէն սկսեցին խաչերն եւս վերցնել: Բայց այս ձիպարի սովորութեանն սկզբնաւորութիւնն անյայտ է մեզ:

3 Ինչպէս Պէրնէցիք եւս կասէին իրենց հայրերէն լուծ աւանդութիւննին. այս անշնչառ անշուշտ ոուրբ Գրեգոր անուան աղտաղեալն պիտի լինի: որոյ մասին պատմական ժանձբութիւն մի չունիմք.

Չերմիլի¹). Կարս քաղաքէն դէպ ի հարաւային արևելք չորս ժամու չափ չեռաւորութեամբ հայաբնակ գիւղ մի է, ձորի մէջ ամրացած. ունին եկեղեցի մի յանուն սրբոյն Յակովայ Մծբնայ հայրապետին. ուսումաբան չունին. մի վարժապետ քանի մի մանուկներ (քսանի չափ) կը վարժէ Հայերէն ընթարցանութեան մէջ:

Լոյս - Աղբիւր. Աղայ - Տէվկ. Զէրմէլի և Պէրնէ գիւղերու մէջտեղն երկու բարձր բլուրներ կան, Աղայ - Տէվկ անուն. այս բլուրներէն բարձրագունին գագաթումն երեք գերեզմաններ կան, և երկրորդի գագաթումն վանքի աւերակ²). Բլուրներու ստորոտում ևս կայ աւերակ գիւղի և վանքի³) և գերեզմանատուն Հայոց: Գերեզմանատան մօտ կայ և աղբիւր մի ցամաք Լոյս - Աղբիւր անուն, որուն համար տեղացիք կաւանդեն թէ ամեն եօթն տարին անդամ մի կը բղխէ. և շատ ուխտաւորներ կը յաճախին այստեղ. մանաւանդ բորոտներ, որ աղքեւրի ջրով լուացուելով կը սրբուին:

Կ. Վ. Ս.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Տ. Ե. Ս. Ս. Ո. Խ. Ի. Բ. Ի. Ռ.

Ենուրանալի է ամեն մտածօղ Հայի համար թէ ազգային լուսաւորութեան գործն ի՞նչ անօրինակ զարկ ստացաւ ներկայ ԱԵՀափառ Կաթողիկոսի օրով: Բայց թէ մեր գործոցներն և մեր մանկավարժներն ըմբըռնած են և կգործադրեն արդեօք ԱԵՀափառ Հայրապետի ցանկացած ուղղութիւնը՝ որով հասնեինք մի բաղդաւոր օրը, ‘Նորա առաջազրած աղքաշն նպատակներին, որա համար ամենքը լրջմիտ կերպով պիտի խորչեն թէ ի՞նչպէս ուղղելու է գորոցը: Ինչ որ ներկայումս կնկատենք թէ հասակաւորների ոմանց և թէ զեռաշասների կողմից — անտեղի յուղմունք, անորոշ պահանջմունք, անզուսպ վարմունք — իւրաքանչիւր մտածօղ և զգացօղ անձի մէջ ծանը մտածմունք և վիշտ կյարուցանեն, մանաւանդ որ այս բոլորն առաւելապէս արձագանք կդժոնէ պատանի անհաստատուն և զիւրազգաց ուղեղների մէջ: Դպրոցն իւր կողմից անչոք մնալ կշարունակէ և միջոցներ չէ գործ զնում պատսպարել իւր սաներին թէ ներքին և թէ արտաքին վատ ազգեցութիւնների դէմ: Իրեւ օրինակ թէ ի՞նչպէս պիտի ներգործեն գպրոցները կարող եմ յիշել միայն թուսիսցի Խարկօվի համալսարանը, որի պրօֆէսորները վերջին ժամա-

1 Ա. յա անունն արդի տաճկերէն լեզուի մի պարզ քառականակութեալիւ առաջանաւոր կամ վառեպաւոր կը նշանակէ:

2 Որիւ է ծանօթութիւն չգոյնուեցաւ թէ ինչ գերեզման կամ վանք էն:

3 Գուցէ Ութմիս կամ Ոթմուս, գիւղն այս լինի, ուստի էին Յովհաննէս և Տրդատ Կաթուղիկոսունք, ուր եւ Յովհաննէս Կաթուղիկոս թաղումեցաւ: